

The logo for the Business Advocacy Network is centered in the upper left. It features the text 'BUSINESS ADVOCACY NETWORK' in a blue, sans-serif font, with 'BUSINESS' on the top line, 'ADVOCACY' in the middle, and 'NETWORK' on the bottom line. The text is set against a light blue background with a network diagram of nodes and lines. The logo is framed by a thick, dark teal border that forms a diamond shape. Several teal-colored squares and lines are scattered around the logo, some pointing towards it and others pointing away. The overall design is modern and professional.

ԳՈՐԾԱՐԱՐ  
ՇԱՀԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՑԱՆՑ

Արդյունաբերության զարգացման  
հնգամյա ռազմավարության  
վերաբերյալ

Դիրքորոշման արտահայտման փաստաթուղթ

Երևան 2019

*Գործարար շահերի պաշտպանության ցանցը գործարարությանն աջակցող 14 կազմակերպությունների միավորում է, որի նպատակն է բարենպաստ գործարար միջավայրի ստեղծումը, երկրի գործարար համայնքի իրավունքների և շահերի պաշտպանության միջոցով: Ցանցի նպատակներից է նաև գործարար հանրության ձայնը հասանելի դարձնել պետական մարմիններին, հանդես գալ որպես կապող կառույց՝ ավելի արդյունավետ իրականացնելու փոքր եւ միջին գործարարության ոլորտի իրենց շահառուների շահերի պաշտպանությունը*

## Արդյունաբերության զարգացման հնգամյա ռազմավարության վերաբերյալ

Ուսումնասիրելով արդյունաբերության զարգացման հնգամյա ռազմավարությունը (<https://www.e-draft.am/projects/2006>), Գործարար շահերի պաշտպանության ցանցը (այսուհետ Ցանց) ընդհանուր առմամբ իր գոհունակությունն է հայտնում կապված ռազմավարությունում առկա դրույթների հետ: Ամփոփելով բուն ռազմավարությունը, որպես ընդհանրական եզրահանգում կարող ենք նշել, որ փաստաթուղթը չունի առանձնացված գործողությունների ծրագիր և առևտրաարդյունաբերական պալատների և բիզնես ասոցիացիաների հետ համագործակցության մասին քիչ է հիշատակվում: Նպատակահարմար կլինի նաև թվային տվյալների համարներ կայացնել նաև սկզբնաղբյուրի հղումները: Ստորև ներկայացնում ենք կներկայացվի ռազմավարությունում առկա խնդիրները և առաջարկությունները այդ խնդիրների լուծման վերաբերյալ՝

- ✓ Առաջարկում ենք փաստաթղթի սկզբնամասում հստակեցնել, թե ո՞ր ոլորտներն են համարվում արդյունաբերական և դրանցից որո՞նք են առավել կարևոր Հայաստանի համար (հաշվի առնելով ռեսուրսների սահմանափակությունը)
- ✓ 14-րդ կետի 2-րդ մասում արտադրողներ-ուսումնական հաստատություններ արդյունավետ կապի ձևավորման հարցում առևտրաարդյունաբերական պալատներն ունեն մեծ դեր և նպատակահարմար կլինի տվյալ ենթակետում ներառել նաև պալատների դերի մասին որոշակի դրույթներ
- ✓ Ամբողջ՝ VI. Ռազմավարության խնդիրները գլխում, անդրադարձ չի կատարվել ներքին շուկայի չափազանց փոքր լինելու խնդրին: Սա իրապես լուրջ խնդիր է, հատկապես օտարերկրյա ներդրումներ ներգրավելու տեսանկյունից: Առաջարկում ենք անդրադառնալ շուկայի տարողունակության խնդրին և որպես լուծում առաջարկել ԵԱՏՄ-ի, ԵՄ-ի և Իրանի շուկա դուրս գալու լայն հնարավորությունները:
- ✓ 18-րդ կետում նշված է՝ «2017թ. ներդրումների և ավելացված արժեքի հարաբերությունը կազմել է 5.2 %՝ այսպիսի ցածր ներդրումների մակարդակը հուշում է, որ ճյուղի երկարաժամկետ մրցունակությունն ու արտադրողականությունը վտանգված է»: Որպեսզի ցուցանիշն ավելի

համեմատելի լինի նպատակահարմար կլինի նաև նշել թե ո՞ր երկրների համեմատ է ցուցանիշը ցածր և/կամ ո՞ր է համարվում ներդրումներ/ավելացված արժեք հարաբերության միջին ցուցանիշը:

- ✓ 21-րդ կետի ա ենթակետում նշված է՝ «կապիտալ և արտադրության կազմակերպմանը օժանդակող միջոցների ներկրման ժամանակ կբացառվեն սահմանին հարկերի գանձման ընթացակարգերը»: Լրացուցիչ հիմնավորման կարիք ունի թե ինչպիսի՞ հստակ փոփոխություններ են նախատեսվում ներկայիս կարգավորումների համեմատ:
- ✓ 21-րդ կետի ե ենթակետում նշված՝ «կատեղծվեն նորարարության համար տեղական էկոհամակարգեր» նախադասությունը նույնպես լրացուցիչ մեկնաբանման կարիք, քանի որ պարզ չէ թե ի՞նչ է տեղական էկոհամակարգը:
- ✓ 21-րդ կետի ը ենթակետում նշված է՝ «Արդի էներգախնայող տեխնոլոգիաների լավագույն միջազգային փորձի հիման վրա արդյունաբերական ընկերություններում էներգախնայող տեխնոլոգիաների ներդրում, որն էլ կհանգեցնի ոլորտում արտադրողականության բարձրացմանը»: Անհրաժեշտ է հստակ նշել, թե՞ ինչ կապ գոյություն ունի էներգախնայող տեխնոլոգիաները արտադրողականության աճի հետ և ինչպիսի՞ գործիքակազմ կկիրառվի էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման համար
- ✓ 25-րդ կետի ա ենթակետում նշված է «շարունակական կբացահայտվի անհրաժեշտ կադրային պահանջարկը և կիրականացվեն համապատասխան կադրերի պատրաստման և վերապատրաստման միջոցառումներ»: Կադրերի պահանջարկի մասով անհրաժեշտ է ավելացնել պահանջվող որակավորումների ցանկը և կատարել նախնական կանխատեսումներ, ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ՝ ուսումնական հաստատություններում տվյալ կրթական ծրագրի համար տրամադրելով համապատասխան թվով տեղեր:
- ✓ 25-րդ կետի դ ենթակետի «կատեղծվի կոնկրետ ոլորտային ուղղվածություն ունեցող որոշ մասնագիտությունների պատրաստման կենտրոններ, միջազգային փորձի ներգրավմամբ»: Այս ենթակետը լրացուցիչ քննարկման կարիք ունի շահագրգիռ կողմերի հետ ներառյալ գործարարների շահերը ներկայացնող կառույցները:

- ✓ 38-րդ կետի ա ենթակետում նշված է «Պետական աջակցության նոր գործիքների մշակում և ներդրում, մասնավորապես՝ աջակցության գործիքների կիրառում, որոնք կբերեն ինքնարժեքի նվազեցմանը (տրանսպորտային և այլ ենթակառուցվածքային ծախսերի մասնակի սուբսիդավորում, և այլն)» : Այս կետը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, քանի որ հիմնավորված չէ թե, ո՞ր դեպքերի համար պետք է կիրառվի սուբսիդավորում և ի՞նչ չափանիշներից էլնելով է ձեռնարկությանը տրվում այդ արտոնությունը:
- ✓ 38-րդ կետի բ ենթակետում նշված է՝ «Լոգիստիկայի կազմակերպման այլընտրանքային հնարավորությունների ստեղծում, մասնավորապես օդային և երկաթգծային ճանապարհով բեռների տեղափոխման հնարավորությունների ստեղծում»: Այս կետը նույնպես լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, քանի որ հստակ չէ, թե ինչպե՞ս է հնարավոր ստեղծել նման հնարավորություններ , այն դեպքում երբ լրացուցիչ ենթակառուցվածքների գործարկումը մեծ մասամբ պայմանավորված է արտաքին գործոններով:
- ✓ 38-րդ կետի գ ենթակետում նշված է՝ «Աջակցություն մասնագիտացված լոգիստիկ կառույցների և ծառայությունների ձևավորմանը»: Առաջարկում ենք հստակեցնել թե ինչպիսի աջակցության մասին է խոսք գնում:
- ✓ 38-րդ կետի է՝ «Ապրանքների վաճառքի էլեկտրոնային հարթակների ձևավորման աջակցություն» ենթակետում առաջարկվում է նշել այն մեխանիզմներն ու գործիքակազմը, որով պետք է խթանել էլեկտրոնային հարթակների ձևավորումը:
- ✓ 41-րդ կետի ա ենթակետում նշված է՝ «Արտահանմանն ուղղված առկա պետական աջակցության ծրագրի շարունակական իրականացում»: Նախքան շարունակականության ապահովումը անհրաժեշտ է վերլուծել նախկինում կատարված առանձին ծրագրերի արդյունավետությունը:
- ✓ 41-րդ կետի դ ենթակետում նշված է՝ «Արտերկրում առևտրային ներկայացուցչությունների, մեծածախ բազաների կամ լոգիստիկ կենտրոնների և տների հիմնում, ինչպես նաև թիրախային շուկաներում վաճառքի և առաջնորման ներկայացուցչությունների հիմնում»: Առաջարկում ենք վերաձևակերպել այս ենթակետը, քանի որ պետության գոծառույթը ոչ թե պետք է լինի ներկայացուչությունների հիմնումնր այլ մասնագիտացված կառույցներին

աջակցություն տրամադրելը, այլ երկրի իմիջի ձևավորումը և/կամ աջակցությունը նշված ներկայացուցչություններին :

- ✓ 41-րդ կետի է ենթակետում նշված է «Արտահանողներին «պարզևավճարների» տրամադրման մեխանիզմի ներդրում»: Առաջարկում ենք ներառել այն հիմնական սկզբունքները, որոնց հիման վրա ձեռնարկությունը կարժանանա «պարզևավճարների»:
- ✓ 43-րդ կետում որպես ենթակետ առաջարկում ենք ավելացնել՝ «գործարարությանն աջակցող կառույցների կարողությունների զարգացում, որոնց միջոցով կոյուրացվի համագործակցությունը մասնավոր հատվածի հետ»:
- ✓ 43-րդ կետում առաջարկվում է ավելացնել նաև՝ « Աջակցել ձեռնարկություններին ԵԱՏՄ երկրներում կազմակերպվող տենդերներին մասնակցության առումով:
- ✓ 45-րդ կետի ա ենթակետում նշված է՝ «հումքի այլընտրանքային աղբյուրների ստեղծման ապահովում»: Որպես կանոն գործարար համայնքը սովորաբար լավատեղյակ է հումքի բոլոր հասանելի աղբյուրների վերաբերյալ ուստի առաջարկում ենք հանել տվյալ ենթակետը:
- ✓ 45-րդ կետի բ կետում նշված է՝ «Տեղական ռեսուրսների խորը վերամշակման կազմակերպման աջակցություն, որը հետագայում կհանդիսանա հումք այլ արտադրությունների համար»: Անհրաժեշտ է հստակություն մտցնել թե ինչպիսի՞ աջակցություն կամ ինչպիսի՞ խրախուսական մեխանիզմներ պիտի ապահովվեն:
- ✓ 47-րդ կետի ա ենթակետում նշված է՝ «պետության կողմից հավաքագրվող տարբեր վճարների կամ դրամագլուխների միջոցներով ֆոնդի ստեղծում, որը կիրականացնի ֆինանսավորում զարգացման ներուժ և տնտեսության վրա էական ազդեցություն ունեցող արդյունաբերական ծրագրեր»: Այս ենթակետում առաջարկում ենք հստակեցնել և ռազմավարության մեջ ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացնել ֆոնդերի մասին: